

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՕԿ *Օգոստոսի* 2015թ. N 228-Ա  
Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«Կ» *Օգոստոսի* 2015թ. N 182-Ա  
Ք. Երևան

#### ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 295-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 151-Ա ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2008 թվականի օգոստոսի 22-ի N 295-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2008 թվականի օգոստոսի 14-ի N 151-Ա «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագիրը հաստատելու մասին» համատեղ հրամանով հաստատված հավելվածում.

1) 17-րդ կետից հետո լրացնել նոր 17.1.-րդ, 17.2.-րդ և 17.3.-րդ կետեր, հետևյալ բովանդակությամբ.

«17.1. Ծրագրով սահմանված 714 հեկտար ընդհանուր մակերեսով անտառապատման համար նախատեսված տարածքից 180 հեկտար ընդհանուր մակերեսով Լոռու մարզի Շնող և Թեղուտ համայնքների տարածքում կարող է իրականացվել պտղատու այգիների հիմնման աշխատանքներ՝ Ծրագրի 3-րդ կետով նախատեսված ժամկետներում:

17.2. Ծրագրի 17.1-րդ կետով նախատեսված աշխատանքների վրա չեն տարածվում Ծրագրի 5-17-րդ կետերի դրույթները:

17.3. Ծրագրի 17.1-րդ կետով նախատեսված աշխատանքներն իրականացվում են համապատասխան համայնքի ղեկավարի՝ լիցենզառուին ուղղված դիմումի և դրան կից պտղատու այգիների հիմնման ծրագրի հիման վրա՝ Լիցենզառուի և տվյալ համայնքի

ղեկավարի միջև կնքված պայմանագրի շրջանակներում, որը նախապես համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի հետ: Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման պատասխանատվությունը կրում է համայնքը (ի դեմս համայնքի ղեկավարի)՝ պայմանագրով նախատեսված պարտավորություններին համապատասխան՝ Լիցենզառուի ֆինանսավորմամբ:»:

2) 18-րդ կետում «անտառապատման» բառից հետո «և» բառը փոխարինել «, պտղատու այգիների հիմնման և դրանց» բառերով:

3) 19-րդ կետը «հաղթող ճանաչված կազմակերպությունը» բառերից հետո լրացնել «իսկ Ծրագրի 17.1.-րդ կետով նախատեսված աշխատանքների իրականացման դեպքում՝ համայնքի ղեկավարը» բառերով, իսկ «անտառապատման նախագծին» բառերից հետո լրացնել «, իսկ Ծրագրի 17.1-րդ կետով նախատեսված աշխատանքների իրականացման դեպքում՝ համապատասխան Ծրագրին» բառերով:

Հայաստանի Հանրապետության  
բնապահպանության նախարար



Հայաստանի Հանրապետության  
գյուղատնտեսության նախարար

